



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԱՐ ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԵԼԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, Նոյեմբեր 17-ին Ազգ. Առաջնորդարան այցելեց Լիբանանի Յովակիմեան Մանուկեան Վարժարանի տնօրենը՝ Տիար Ժիրայր Դանիելեան, եւ հանդիպում մը ուսեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի հետ: Տիար Դանիելեանի կ'ընկերանար Վարժարանի շրջանաւարտներու Լու Անճելըսի միութեան ատելապէտ Տիար Ալօ Մարգարեան:

Տիար Դանիելեան, որ կարձատեւ այցելութեան մը համար եկած էր Լու Անճելըս, Առաջնորդ Սրբազնին փոխանցեց Լիբանանի ու յատկապէս մեր Վարժարաններու այժմու իրավիճակը, երախտագիտութեան արտայայտութիւն ունենալով Լիսսի Յիմնարկութեան ծանօթ իշխանական նուիրատուութեան համար: Առաջնորդ Սրբազնը, իր կարգին, Տիար Դանիելեանի հաղորդեց Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող աշխատանաքներուն ընդհանուր պատկերը:

### **PRELATE WELCOMES MR. JIRAYR TANIELIAN, PRINCIPAL OF HOVAGIMIAN-MANOUGIAN SCHOOL IN LEBANON**

On Friday, November 17, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Mr. Jirair Tanielian, Principal of Hovagimian-Manougian School in Lebanon, and alumni committee member Mr. Avo Markarian, at the temporary Prelacy offices in Encino.

Mr. Tanielian reported to the Prelate about the condition in Lebanon and specifically in Armenian schools, and expressed his gratitude for the Lincy Foundation's recent generous donation. The Prelate then imparted information about the endeavors of our Prelacy.

### **Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ**

Ծաբաթ, 18 Նոյեմբերի երեկոյեան, Առաջնորդ Սրբազնն ու Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ ներկայ եղան Օրենք Քառութիի Ս. Զարասնից Մանկանց եկեղեցւոյ հանգանակային ձեռնարկին, որուն նպատակն էր

մասնակցութիւն ապահովել Եկեղեցւոյ վերանորոգութեան ու շինարարական ծրագիրներուն:

Սեղանի օրինութիւնը կատարեց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արք. Տ. Հրանդ Քիսյ. Երեցեան: Յոզաբարձութեան ողջոյնի խօսքը արտասանեց ատենապետը՝ Տիար Նազարեթ Տիշոյեան: Գործադրուեցաւ գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերին Տիար Արքամ Աղապապեան, Եկեղեցւոյ դպրաց դասը, Տիկին Աննա Պետրոսեան եւ պարուսոյց Տիկին Փըրլի Վարժապետեանի խումբը:

Օրուան պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը, որ գևահատաքով արտայայտուեցաւ Եկեղեցւոյ ծառայութեան լծուած բոլոր Նուիրեալներուն մասին, ինչպէս նաև դրուատեց բարերարներն ու բարեկամները, որոնք կը գործեն ու կը զոհաբերեն ի խնդիր Եկեղեցւոյ պայծառութեան ու բարեփոխման: Ան կոչ ուղղեց Ներկաներուն, որ աջակցին Եկեղեցաշին աշխատանքին:

Յայտնենք, որ ձեռնարկը պսակուեցաւ յաջողութեամբ եւ սրտաբուխ Նուիրատուութիւններէն գոյացաւ աւելի քան 100,000 տոլարի գումար մը:

## FUNDRAISING BANQUET OF FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY WAS A SUCCESS

On Saturday, November 18, the Prelate and Executive Council representatives attended the fundraising banquet of Forty Martyrs Church in Orange County, which was held to raise funds for the renovation of the church.

The evening began with the invocation of pastor Rev. Hrant Yeretsian, followed by welcoming remarks by Board of Trustees Chair Mr. Nazareth Dishoian. An artistic program also took place with the participation of Mr. Aram Aghababian, the church choir, Mrs. Anna Bedrossian, and the dance group of Mrs. Perly Varjabedian.

In his remarks, the Prelate expressed appreciation to all the donors and friends for their continuous support and devotion to the church.

The event was a success with a sum of over \$100,000 being raised.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՃՈՎԱՆԱՒՐԵՑ Յ. Ա. ԵՂԲԱՅՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՂՆԱՐԿԸ

Երկուշաբթի, Նոյեմբեր 20-ի երեկոյեան, Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեջ տեղի ունեցաւ Գոհաբանութեան օրուան տօնակատարութիւն մը, Նախաձեռնութեամբ Յայ Առաքելական Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան եւ հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր: Իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Յօր՝ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան իբրեւ պատգամաբեր Ներկայ Եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան հօր օրինութեան խօսքը:

## ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD ANNUAL EVENT

On Monday, November 20, the annual event of the Armenian Ecclesiastical Brotherhood took place at St. Garabed Church in Hollywood. Very Rev. Fr. Barthev Gulumian represented the Prelate and conveyed his blessings.

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԵՎՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆԸ**

Երեքաբթի՝ Նոյեմբեր 21-ին, կ.ա. ժամը 11-ին, Առաջնորդ Սրբազնն ու Ազգ. Վարչութեան Դիւանի անդամներ պաշտօնական այցելութիւն մը տուին Հայաստանի Հիւպատոսարան հանդիպելու եւ շնորհաւորելու նոր գլխաւոր հիւպատոս՝ Տիար Վրմէն Լիլոյեանը:

Հայրենի հիւպատոսը երկու շաբաթ առաջ այցելած էր Ազգային Առաջնորդարան եւ ընդունուած՝ Առաջնորդ Սրբազնին եւ մեր Թեմի ժողովականութեան Ներկայացուցիչներուն կողմէ:

Հանդիպումին, Առաջնորդ Սրբազնին կ'ընկերանային Արժ. S. Ռազմիկ Զհիյ. Խաչատուրեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Կարօ Յակոբեան եւ ատենադպիր Տիար Պողոս Սասունեան: Խորհրդակցութիւնը ընդգրկեց դիւանագիտութեան Ներկայացուցչութեան աշխատանքներու մարզն ու Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութեան ծրագիրները:

Հանդիպումին աւարտին Առաջնորդ Սրբազնը գլխաւոր հիւպատոսը հրաւիրեց նոր Տարուան եւ Ս. Շնորհեան ձեռնարկին:

### **PRELATE VISITS CONSUL GENERAL OF ARMENIA, ARMEN LILOYAN**

On the morning of Tuesday, November 21<sup>st</sup>, the Prelate and members of the Executive Council paid an official visit to the Consulate General of the Republic of Armenia to meet with Consul General Armen Liloyan.

Accompanying the Prelate were Rev. Razmig Khatchadourian, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council Chair Dr. Garo Agopian, and secretary Mr. Boghos Sassounian.

At the end of the meeting, the Prelate invited the Consul General to the Prelacy's New Year's and Christmas Dinner.

### **ՄԻԶԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ**

Երեքաբթի, Նոյեմբեր 21-ին, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ Վարիչները՝ Գերապ. S. Միւռոն Շ. Վրդ.

Ազնիկեան եւ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւիւմեան, իբրեւ Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազնին, Ներկայ Եղան Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու հերթական ժողովին, որ տեղի ունեցաւ Եշմիածնական Թեմի Առաջնորդարանին մէց:

Ժողովը քննարկեց Ուղղափառ Եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարաններու հաւաքի յաջող արդիւնքները եւ թելադրուեցաւ, որ աշակերտական նման հաւաքներ կրկնուին ամէն տարի:

Ժողովը քննարկեց յառաջիկային կայանալիք Երիտասարդական ճամբարի, ինչպէս նաև յառաջիկայ տարուան Եկեղեցական միօրեայ համագումարին ծրագիրները: Առաջնորդ Սրբազն Յօր Իրաւերով համագումարը տեղի պիտի ունենայ 19 Ապրիլ, 2007ին, Մոնթելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէց:

## **PRELATE REPRESENTED AT THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX CHURCHES MEETING**

On Tuesday, November 21<sup>st</sup>, Prelacy Christian Education Department Directors Very Reverend Fathers Muron Aznikian and Barthev Gulumian represented the Prelate at the quarterly meeting of the Council of Oriental Orthodox Churches of the Western U.S.A. that took place at the Diocese.

At the meeting, the success of the Oriental Orthodox Sunday School spiritual gathering was discussed, and it was suggested that such a gathering take place on a yearly basis.

Also discussed was the upcoming youth camping trip, as well as upcoming one-day seminar to take place by invitation of the Prelate on April 19, 2007 at Holy Cross Cathedral in Montebello.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՃԵՆՔԻՆ ՄԵԶ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ**

Զորեցաբթի, Նոյեմբեր 22-ի կեսօրին, Արցախի նախագահ Արկադի Ղուկասեան ացելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարանի նոր շենքը եւ դիմաւորուեցաւ Առաջնորդ Սրբազնին ու Ազգային Վարչութեան Ներկայացուցիչներու կողմէ: Նախագահին կ'ընկերանային Արցախի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Յայաստանի գլխաւոր հիւպատոս Արմեն Լիլոյեան եւ Յիմսադրամի պատասխանատուներ:

Քիւր նախագահը շնորհաւորեց Առաջնորդ Սրբազնան ու Ազգ. Վարչութեան անդամները եւ գոհունակութիւն յայտնեց, որ նոր շենքի բարեփոխման աշխատանքները հասած են իրենց լրումին: Ան նաեւ մաղթեց, որ այս երազին իրականացումը նոր թափ տայ Ազգ. Առաջնորդարանի ազգօգուտ ու Եկեղեցանուեր գործին:

Այս ացելութենեն ետք, Առաջնորդ Սրբազնան ու Ազգային Վարչութիւնը հիւր նախագահն ու անոր ընկերակիցները ճաշով մը հիւրընկալեցին Կլենտեյլի «Ֆենիսիա» ճաշարանին մէց:

Ընդունելութեան, Առաջնորդ Սրբազն Յօր կողքին ներկայ էին Ազգ. Կարչութեան անդամներ, Յ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներ, Կլեստյլի քաղաքապետական խորհուրդի ներկայացուցիչներ, քոյր միութեանց ու կազմակերպութեանց անդամներ, Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ, որոնք զօրակցութիւն կը յայտնեն ու աշխատանքային կապեր ուսին Հայաստանի հետ:

Առաջնորդ Սրբազնը ողջունեց նախագահը եւ յաջողութիւն մաղթեց «Հայաստան» Հիմնադրամի թելեթոնին, որուն համար Լու Անձելը ժամանած է նախագահ Ղուկասեան: Խօսք առին նաեւ Գերշ. ՏՊարգեւ Վրք. Սարտիրոսեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոսը, Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ միութեանց ներկայացուցիչները: Նախագահ Արկադի Ղուկասեան իր կարգին շնորհակալութեան ու գոհունակութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազնին ու ներկաներուն, ցուցաբերուած շերմ ընդունելութեան համար, ու մաղթեց, որ հարեւնիքին ու արտերկրի օճախներուն միշեւ գործակցութիւնը նորանոր ծաղկումներ ապրի:

## **PRELATE WELCOMES PRESIDENT ARKADY GHOUKASIAN AT HE PRELACY NEW BUILDING**

On Wednesday, November 22<sup>nd</sup>, the Prelate and Executive Council officially welcomed H.E. Arkady Ghoukalian, President of the Republic of Nagorno Karabakh, at the Prelacy new building.

The honorable guest and his entourage arrived at the Prelacy just after 11:30 and were welcomed by the Prelate and Executive Council members. Accompanying the President were H.E. Archbishop Barkev Mardirossian, Prelate of Artsakh, Consul General of the Republic of Armenia Armen Liloyan, and other officials. The President congratulated the Prelate and Council members on the completion of the renovation of the new building and wished them success in their future endeavors.

Later on, the Prelate and the Executive Council had organized a reception in honor of President Ghoukalian at the Phoenicia restaurant in Glendale. Among the invited guests were Executive Council members, A.R.F. Central Committee representatives, Glendale City Council members, members of community organizations, and Prelacy donors and friends.

During the reception, the Prelate welcomed the President and offered his blessings for a successful Telethon. Archbishop Barkev Mardirossan, Consul General Armen Liloyan, ARF Central Executive representative Mr. Avedik Izmirlian, and representatives of Armenian organizations also welcomed the president and conveyed their wishes of a bright future for Artsakh and our homeland.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶՆԱԾ ՅԱՆՈՒՆ ՄԵՐ ԹԵՄԻ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ԶՐԴ ԹԵԼԵԹՈՆԻՆ**

Քիսզաքթի, 23 Նոյեմբերին, տեղի ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աւանդական թելեթոնը, մասնակցութեամբ Արեւմտեան մեր Թեմի

շրջանի հայկական մեծ ընտանիքին ու Արցախի պետական ու հոգեւոր առաջնորդներուն:

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Սրբազնը մասնակցեցաւ թելեթոնին բացման աղօթքին: Նոյն առիթով Սրբազն Յայրը իր զորակցութիւնը յայտնելով թելեթոնին կոչ ուղղեց մեր գաղութի զաւակներուն, որպեսզի իբրեւ ազգային պարտականութիւն՝ մասնակից ըլլան այս հանգանակային արշաւին, որուն նպատակն է գործել ի խնդիր Յայաստանի ու Արցախի ֆիզիքական վերականգնումին:

Նշենք որ Գոհաբանութեան Տօնին առթիւ կազմակերպուած 9րդ թելեթոնն գոյացաւ 13.7 միլիոն տոլար:

### **ON BEHALF OF OUR PRELACY H.E. THE PRELATE PARTICIPATED IN THE 9<sup>TH</sup> INTERNATIONAL ARMENIA FUND TELETHON**

On Thanksgiving Day, the 9<sup>th</sup> international Armenia Fund Telethon took place on Thursday, November 23rd, with the participation of the Western Prelacy and its affiliated bodies, along with the government and spiritual leaders of Artsakh.

The Telethon started with the opening prayer by the spiritual leaders of the Western United States. On this occasion, the Prelate urged our community members to fulfill their national duty and participate in the Telethon to support the rebuilding of Artsakh.

The Thanksgiving Day Telethon raised a total amount of \$13.7 million.